

ՄԻՋՆԱԴԱՐՆԱՆ

Դըրանդ ունկին կապեցի ես զաղտագողի
Ձիւնասպիտակ ուլիկ մ'իբրեւ նըւէր զարնան.
Սեմին վըրայ դըրի կողովն այս մըգալի.
Ես, սիրահար խելակորոյս հովիւ տըղան, —

Որուն անունը հովին մէջ քեզի կու գայ,
Սոյն ալ սրինգին՝ որ իր սրտին է հանգունակ՝
Երաժիշտ է ու վիրաւոր, հազար վըկայ
Կրնամ բերել հովիւներէն լեռնաբընակ,

Որոնք տեսան իմ արցունքներս, եւ լըսեցին
Հառաչանքներս. ու զիս տեսան զայլերուն դէմ
Միշտ անյողգողդ, քաջակորով եւ առանձին...

Բայց երբ կ'անցնիս դուն անտարբեր, խոժոռադէմ,
Ճամբուդ վըրայ եղէգի պէս կը դողդըղամ
Ես, սիրահար խելակորոյս հովիւ տըղան...

ԹԱԽԻՄ

Հետըս եկար մայրական սուրբ ծոցին մէջէն,
Ու մինչեւ իսկ ամենախոր բերկրանքին հետ
Կը զգամ որ միշտ զաղտնի ցաւեր զիս կը տանջեն,
Եւ կ'արեւնի սիրտըս բիւրեղ սըլաքներէդ:

Դուն անբաժան եղար ինձմէ. արցունք դըրիւր
Իմ ամէն մէկ ժրպիտիս մէջ, ամէն երգիս
Լարերուն վըրայ որբի մը պէս լացաւ հողիս.
Խորհուրդն ես դուն ճակատագրի մ'անկարեկիր:

Այսպէս, ա՛յնքան մենք չաղկապուած ենք իրարու.
Ձիս չեն տեսներ, առանց ըզքեզ ալ տեսնելու.
Օր մը, երբոր մեռած ըլլամ, պատկերդ անհուն

Պիտի ծածկէ թանձր քողին տակ իր խաւար
Իմ կերպարանքս՝ որ անծանօթ ալ ամէնուն,
Պիտի՝ աղօտի գերեզմանին մէջ տեւաբար...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ՍԻՐՈՅ ՄԵՆԱՄԱՐՏ

Արեւոտ սրտիս լայն բեմին վըրայ
Իմ հայրենիքիս սէրը լուսադէմ
Ասպարէզ կարդաց սուրով իր բոսոր,
Անհուն տենչերուս, սէրերուս բոլոր:

Եւ յանկարծ փառքի տենչանքըս խըրոխտ
Մերկացաւ սուրն իր պատեանէն ոսկի.
Եւ առոյգ սրտիս լայն բեմին վըրայ
Մենամարտն ահեղ ըսկըսաւ ահա:

Ջրվէժ էր արդեօք, թէ շանթերու շաչ,
Որ ալեկոծեց հողիս լուսաբաղձ.
Բայց հայրենիքիս սիրոյ սուրը հին
Սէրըս փառատենչ ըզգետնեց ուժգին:

Այն ատեն անյաղ տենչանքըս փառքի
Իմ հայրենիքիս վառ սիրոյն առջեւ
Մերկացաւ ուսէն ու փրոնեց գետին
Շողերով հիւսուած փառքի ծիրանին:

Եւ յետոյ անվերջ սրտիս բովերէն
Բոցեղ աչքերով եկան փշրեցան
Իմ հայրենիքիս սուրին դէմ բոսոր
Տենչերըս անհուն, սէրերըս բոլոր:

Եւ հուսկ հայրենի սիրոյս դէմ դիմաց
Ելաւ իմ անյաղթ սէրըս մայրական.
Հարուած հարուածի դէմ տըւին առին,
Որպէս հըրացայտ շանթեր մոլեղին:

Բայց հայրենիքիս սիրոյ սուրն ահեղ
Խոցեց սիրտը մեծ սիրոյս մայրական.
Եւ այդ լայնարաց աղբիւրէն վէրքի
Ցայտեց բոցավառ սէ՛ր, սէ՛ր Հայրենի:

Հ. ԵՓՐԵՄ ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ